ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 1/1

ք. Երևան 1 հոկտեմբերի 2020թ.

ՄԻԽԵԻԼ ՍԱԱԿԱՇՎԻԼԻԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԴՈԿՏՈՐԻ ԿՈՉՈՒՄԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վրաստանի Հանրապետության նախկին նախագահ Միխեիլ Նիկոլոզի Սաակաշվիլիի կողմից Արցախի Հանրապետության դեմ ադրբեջանա-թուրքական ռազմական ագրեսիան առերևույթ արդարացնելու նպատակով հակահայկական հայտարարություններ անելու, Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի և հայ ժողովրդի ազգային շահերի նկատմամբ կողմնակալ ու բացահայտ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու համար, ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 49-րդ կետի 15-րդ ենթակետով, ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 15-րդ ենթակետով.

Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Վրաստանի Հանրապետության նախկին նախագահ Միխեիլ Նիկոլոզի Սաակաշվիլիին զրկել «Երևանի պետական համալսարանի պատվավոր դոկտորի» կոչումից:
2. Անվավեր ճանաչել ԵՊՀ գիտական խորհրդի 2009 թ. հունիսի 25-ի որոշումը և թիվ 060 կոչման վկայականը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ